ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ՀՀ ԱՍՀ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԿԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԾԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առաջարկության հեղինակը	**Առաջարկության բովանդակությունը**	**Եզրակացություն**	**Կատարված փոփոխությունները**
Թամարա Աբրահամյան («Արազա» ԲՀԿ)	1. Ծրագրի 2-րդ միջոցառման, «Ակնկալվող արդյունքը» սյունակում «բարձրացում» բառից հետո ավելացնել «ՔՀԿ-ների մասնակցությամբ» բառերը: 2. 4-րդ միջոցառման նույն սյունակում «ուսումնասիրում» բառը փոխարինել «ուսումնասիրության վրա հիմնված որոշումների ընդունում» բառերով: 3. 5-րդ միջոցառման «ժամկետը» սյունակում «խորհրդի» բառից հետո լրացնել «հերթական նիստերի օրակարգի առաջարկի ներկայացում, կամ» բառերը:	Ընդունվել է ի գիտություն: Հասկանալի է,որ նշված արդյունքը կապահովվի ՔՀԿ-ների ակտիվ մասնակցությամբ: Ընդունվել է: Ընդունվել է ի գիտություն: Այս միջոցառման «ժամկետը» սյունակի բովանդակությունը փոխարինվել է «2017-2018թթ. ընթացքում՝ ըստ անհրաժեշտության» բառերով՝ խորհրդի անդամ Ա. Հարությունյանի առաջարկով:	Փոփոխություն չի կատարվել: Կատարվել է համապատասխան փոփոխություն:
Արթուր Սարգսյան(«Աշխատանքի իրավունքի	Անհրաժեշտ է ծրագրի 1-ին, 2-րդ և 6-րդ տողի 1-ին սյունակում նշված միջացառումների անվանումների սկզբում լրացնել «Աշխատանքի, զբաղվածության և» արտահայտությունը:	Ընդունվել է մասնակի:	Նշված տողերի 1-ին սյունակում միջոցառումների սկզբում լրացվել է

պաշտպանի գրասենյակ» ՀԿ)			«Աշխատանքի և» բառերը:
Արա Հայրապետյան (Օրենսդրական բարեփոխումների փորձագետ)	1. Ծրագրի 1-ին կետում առաջարկում եմ առավելապես հստակեցնել սոցիալական պաշտպանության համապատասխան ոլորտներում ընդունվելիք նորմատիվ իրավական ակտերի նախագծերը Խորհրդին ներկայացնելու և դրանք Խորհրդի կողմից քննարկելու ժամկետը: 2. Ծրագրի 5-րդ կետում, «Ժամկետը» սյունակի ներքո նշված՝ «Ըստ նախապես պայմանավորվածության՝ խորհրդի արտահերթ նիստերի հրավիրում» արտահայտությունը բովանդակային առումով չի արտացոլում տվյալ կետում նշված միջոցառման իրականացման ժամկետը: Ուստի, առաջարկում եմ տվյալ կետում «Ըստ նախապես պայմանավորվածության՝ խորհրդի արտահերթ նիստերի հրավիրում» բառերը փոխարինել «2017-2018թթ. ընթացքում՝ ըստ անհրաժեշտության» բառերով:	Առաջարկը հաշվի է առնվել 1-ին կետի վերախմբագրմամբ: Այն «քննարկում» բառից հետո լրացվել է «խորհրդի հերթական, առանձին դեպքերում՝ արտահերթ նիստերում» բառակապակցությամբ: Ընդունվել է:	Կատարվել է նշված փոփոխությունը, ինչպես նաև 4-րդ սյունակում «ներկայացնելը» բառից հետո լրացվել է «ըստ անհրաժեշտության» բառերը: Կատարվել է համապատասխան փոփոխություն:
Մարիետա Թեմուրյան(«Հելսինկյան քաղաքացիական	Վերանայել «Սոցիալական պաշտպանության համապատասխան ոլորտներում ընդունվելիք իրավական ակտերի նախագծերի ներկայացում և քննարկում» միջոցառման ժամկետը,	Ընդունվել է ի գիտություն: Այս միջոցառման և բովանդակությունում և «ժամկետը» սյունակում արդեն իսկ կատարվել են	

ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ)	այն է՝ «Նախքան իրավական ակտի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը», քանի որ նախարարության կողմից շրջանառվող ոչ բոլոր իրավական ակտերի նախագծերն են ներկայացվում ՀՀ կառավարություն: Միաժամանակ առաջարկում եմ նախարարության կողմից շրջանառվող իրավական ակտերի, հայեցակարգերի, ռազմավարությունների, ծրագրերի նախագծերի վերաբերյալ իրազեկել նաև սույն հարթակում խորհրդի կողմից առաջարկությունների և դիտողությունների ներկայացման նպատակով:	փոփոխություններ: Ընդունվել է ի գիտություն: Հարկ է նշել նաև, որ նախարարության կողմից մշակված ՀՀ օրենքների և ՀՀ կառավարության որոշումների նախագծերը տեղադրվում են www.e-draft.am կայքում: Եթե խորհրդի որևէ անդամի կողմից կլինեն առաջարկներ, այս կամ այն իրավական ակտի նախագծի վերաբերյալ, ապա նախարարությունը սիրով կընդունի դրանք և անհրաժեշտության դեպքում հաշվի կառնի:	